Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր

վերապատրաստման

դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես ավելի արդյունավետ դարձնել դասղեկ – սան փոխհարաբերությունները

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Իսոյան

«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ

Բովանդակություն

1.Ներածություն ---------- 3

2.Գլուխ 1. Դաստեկի գործառությները ----------4

3. Գլուխ 2. Դաստեկական աշխատանքների կազմակերպում ----------8

4. Գլուխ 3. Դաստեկի համագործակցությունը ծնողի հետ ----------14

5. Եզրակացություն ----------18

6. Օգտագործված գրականության ցանկ ----------20

Ներածություն

Առաջին անգամ դասղեկի պաշտոնը ներդրվել է1930-ական թվականներին: Մինչ այս խմբային դաստիարակչական աշխատանքն իրականացվում էր ուսուցիչների կողմից:Դասարանում մանկավարժական գործընթացն ուղղված է աշակերտների համակողմանի զարգացմանը:Դասղեկի դերը սովորողների մոտ սովորելու նկատմամբ պատասխանատու վերաբերմունք և ինքնուրույն սովորելու կարողություն ձևավորելն է:Դասղեկի մանկավարժական պարտականությունն է հոգ տանել աշակերտների առողջության պահպանման և ամրապնդման մասին: Դասղեկի առանձնահատուկ դերը՝ սաների, սաների ծնողների, դպրոցի կրթական գործունեության մեջ միասնության հասնելն է: Այսպիսով, դասղեկը հանդես է գալիս և՛ որպես կրթական գործունեության կազմակերպիչ, և՛ որպես ուսուցիչ սովորողների համար:[1]

Որպես կանոն՝ սովորողների հաջողության գրավականը ամբողջ ուսումնական տարվա ընթացքում կախված է այն բանից, թե ինչպիսի վարպետությամբ դասղեկը կկարողանա կարգուկանոն հաստատել դասարանում, ինչ սպասելիքներ և նպատակներ ունի դասղեկը ուսումնական տարվա ավարտին:Այս ամենը հարկավոր է մանրամասն ներկայացնել աշակերտներին, իսկ նրանք կաշխատեն հնարավորինս իրագործել այդ սպասելիքները և նպատակները, իհարկե, դասարանական առողջ մթնոլորտում:

Հետազոտության նպատակն է սահմանել դասղեկի գործունեության ռազմավարությունները՝ ինչ պարտականություններ, գործառույթներ է կատարում դասղեկը, համակարգել դասղեկի կազմակերպչական աշխատանքների բովանդակությունը և ձևերը՝ որպես սովորողների ուսումնառության և դաստիարակության հիմնա-

---

[1] Статья “Роль классного руководителя в современной школе”, 17.08.2018

կան և գլխավոր դերակատար:

Հետազոտության խնդիրը : Լինելով դասղեկ՝ բախվել եմ մի շարք խնդիրների դասղեկ – սան - ծնող առողջ փոխհարաբերությունների կառուցման գործում, ուստի փորձեցի վերլուծել իմ կատարած աշխատանքները, համագործակցել գործընկերներիս հետ,ուսումնասիրել և գտնել օպտիմալ լուծում, որը կբխի երեխաների շահերից, լուսաբանել ծնողների և դասղեկի վճռորոշ դերը երեխայի ուսումնառության գործընթացում, վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսական և գործնական մոտեցումները, մեկնաբանությունները:

Գլուխ 1. Դասղեկի գործառույթները

Դասղեկի դերը հանրակրթական դպրոցի տարբեր տարիքային դասարաններում առողջ կոլեկտիվի ձևավորման հարցում որոշիչ դեր ու առանձնահատուկ նշանակություն ունի: Ըստ այդմ էլ դասղեկը, օրենքով սահմանված կարգով, ունի իր պարտականությունները.

- դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված սովորողին (ընտանիքին) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

- մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

- նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը, անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

- իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրենությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

- կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

- դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

- արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:[2]

Դասարանում կարող են ընդգրկված լինել այնպիսի երեխաներ, որոնք տարբեր են դաստիարակությամբ, աշխարհընկալմամբ ու աշխարհայացքով, արժեհամակարգով: Դասղեկի դերն է գործել նպատակաուղղված, քանի որ դպրոցում սովորողների դաստիարակության պատասխանատուն է և այդ դժվարին գործընթացի իրականացնողը: Նա սովորողների մոտ ձևավորում է հայրենասիրություն,պատասխանատվություն սեփական արարքների նկատմամբ, ինքնուրույնություն, մի խոսքով՝ ձևավորում է ինքնակառավարվող սովորող:

Ֆրանսիացի մանկավարժ Ս. Ֆրենեն գրել է. «Դաստիարակության հիմքում ընկած է անձի արժանապատվությունը:Ուսուցչի և աշակերտի փոխադարձ հարգանքը դպրոցի բարելավման գլխավոր պայմաններից մեկն է»:

Քանի որ մենք պետք է դիմակայենք 21-րդ դարի մարտահրավերներին, դաստիարակենք այնպիսի քաղաքացիներ, որոնք մեր ապագան կերտողներն են, ժամանակակից դասղեկը պետք է կիրառի դաստիարակչական աշխատանքների այնպիսի մեթոդներ ու ձևեր, որոնք բխում են աշակերտի կարիքներից, տարիքային ու անհատական առանձնահատկություններից:Իսկ աշխատանքի մեթոդներն ու ձևերը բազմաթիվ են: Օրինակ՝ զրույցներ, բանավեճեր, հանդիպումներ անվանի մարդականց հետ, վիկտորինաներ, մրցույթներ, էքսկուրսիաներ, ներկայացումներ, ցերեկույթներ, բարձր դասարանցիների հետ՝ ար-

2. «ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն՝ ՊՈԱԿ» օրինակելի կանոնադրություն, կետ 76

շավներ, հասարակական աշխատանքներ և այլն:Թվարկվածների մեծ մասը կարելի է իրականացնել դասղեկական ժամերի ընթացքում:

Այն երեխան, որը դաստիարակվում է ուսուցչի կողմից, Վ. Ա. Սուխոմլինսկին համեմատում է մարմարի մեծ ժայռաբեկորի հետ, որին միաժամանակ մոտեցել են մի քանի քանդակագործներ և նպատակ դրել կերտել մի քանդակագործական երկ,շնչավորել այն, նրա մեջ մարմնավորել մարդկային իդեալ:Ուսուցիչն էլ յուրովի քանդակագործ է. նա կարծես գիտելիքի կենդանի պահեստ լինի, որը կարողանում է մարդկության ինտելեկտուալ հարստությունը փոխանցել երիտասարդ սերնդին, նրանց մեջ սերմանել հարցասիրություն, գիտելիքի նկատմամբ՝ սեր, ասել է թե՝ կերտում է ապագայի մարդուն:[3]

Յուրաքանչյուր երեխա պետք է ունենա իր տեղն ու դերը, գիտակցի իր կարևորությունը հասարակության մեջ, իսկ այդպիսի անձ ձևավորելը պետք է լինի դասղեկի առանցքային նպատակը: Հաջողության հասնելու համար դասղեկը պետք է պլանավորի իր աշխատանքները սովորողների հետ՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները, նախասիրությունները, միասին ստեղծել բարենպաստ պայմաններ՝ աշխատանքը իրականացնելու համար: Նպատակին հասնելու համար՝ դասղեկը պետք է համագործակցի ոչ միայն սովորողների, այլև դասավանդող ուսուցիչների և ծնողների հետ, քանի որ դասարանում կլինեն նաև ինտեգրման կարիք ունեցող երեխաներ:

Իմ փորձից: Նախքան դասարանի հետ աշխատելը պետք է հնարավորինս շատ բան իմանալ աշակերտների մասին, հատկապես եթե նոր դասարան է ձևավորվել:Առաջին հերթին, որոշակի տեղեկություն իմանալու համար, հարկավոր է ծանոթանալ աշակերտի անձնական գործին: Իմ դասղեկական դասարանում հանձնարարեցի 5-րոպեանոց շարադրանք «Ո՞վ եմ ես» վերնագրով, այնուհետև երեխաները ընթերցեցին իրենց շարադրանքը: Երեխաների հետ անկեղծ և անմիջական շփում ապահովելու համար ես էլ մի փոքր պատմեցի իմ մասին, այսպես նաև ձեռք բերեցի փոխադարձ վստահություն: Իմ կարծիքով անմիջականությունը հաջողության հասնելու առաջին գրավականն էր:

Յուրաքանչյուր սովորող ունի իր «անձնական տարածքը», իրեն հատուկ բնավորության գծերը: Սկզբում պետք է սովորողին ընդունել այնպիսին, ինչպիսին որ կա, լինել ներողամիտ նրա նկատմամբ և ժամանակի ընթացքում հնարավորինս հղկել բնավորության բացասա-

---

3.Սուխոմլինսկի Վ. Ա., Հարյուր խորհուրդ ուսուցչին, 2-րդ մաս, Երևան, 1981թ., 174 էջ:

կան գծերը /դասղեկը ասես բրուտ լինի, նա պետք է կարողանա աշակերտին այնպես հմտորեն ձևել, ինչպես բրուտը վարպետորեն ձևում է տձև կավը և ստանում մարդուն անհրաժեշտ գեղեցիկ իրեր/: Պետք է հնարավորինս թափանցել սովորողի ներաշխարհ՝ զգալու՝ ի՞նչն է նրան հուզում կամ ուրախություն պատճառում: Յուրաքանչյուր քայլ պետք է անել մտածված, մատնանշել սովորողի անգամ փոքրիկ հաջողությունները: Դա նրան թևեր կտա հաղթահարելու անհասանելի թվացող բարձունքը:Դասղեկը երբեք չպետք է վիրավորի կամ սպառնալիքով խոսի իր աշակերտի հետ, հատկապես ամբողջ դասարանի ներկայությամբ, այլ իր բարի խորհրդով ու արարքներով օրինակ լինի իր աշակերտի համար /օրինակ՝ կարելի է ստեղծել նմանատիպ իրավիճակ և ցանկալի ելքով ավարտ/:

Եթե կազմակերպում ենք միջոցառումներ, ապա պետք է այնպես անել, որ յուրաքանչյուրն իրեն զգա միջոցառման կարևորագույն «դեմքը», ասել է թե ՝ առանց իր մասնակցության միջոցառումը չէր կայանա: Դա հնարավորություն կտա սովորողին բացահայտել իր մեջ եղած թաքնված ունակությունները, չէ որ կան աշակերտներ, որոնք անընդհատ թերագնահատում են իրենց կարողությունները: Նրանց պետք է ոգևորել՝ ասելով՝ «Դու կարող ես»: Ընդհանրապես, անաչառությունն ու արդարամտությունը յուրաքանչյուրի հանդեպ դեպի աշակերտի սիրտը տանող միակ ճանապարհն է: Դասղեկը պետք է լինի սովորողի լավագույն, հոգատար ընկերը, չէ որ սովորողը վստահում ու հավատում է նրան:

Իմ փորձից: Ես նոր էի դասավանդում դպրոցում, երբ տնօրենությունը ուսուցիչներին հանձնարարեց կազմակերպել համադպրոցական միջոցառում: Ես դասավանդում էի 8-րդ դասարանում, որը չէր փայլում իր «համեստությամբ», և դա իմ առաջին միջոցառումն էր: Ես ընգրկեցի ամենաչար տղաներին, նրանց տվեցի դրական կերպարների դերերը /պետք է բեմադրություն խաղային/: Ուսուցիչներից ոմանք թերահավատորեն էին մոտենում իմ նախաձեռնությանը, քանի որ տղաները նաև վատ էին սովորում: Բայց մենք ջանասիրաբար աշխատեցինք ու հաջող ելույթ ունեցանք՝ փշրելով այն կարծրատիպը, որ «վատ սովորող տղաները ունակ չեն լինի իրենց դերերը լավ խաղալու» , նույնիսկ զարմացած էին նրանց ծնողները: Աշակերտներս արժանացան հանդիսատեսի ջերմ ծափահարություններին: Միջոցառումից հետո շատ բան փոխվեց նրանց վարքում:

Գլուխ 2. Դասղեկական աշխատանքների կազմակերպում

Դասղեկը իր աշխատանքները ճիշտ կազմակերպելու և պլանավորելու համար պետք է՝

- ծանոթանա աշակերտի անձնական գործին ,
- կազմակերպի ծնողական ժողով՝ ծնողներին ճանաչելու համար,
- սեպտեմբերի առաջին շաբաթվա վերջում կազմակերպի «Դասղեկական ժամ», զրուցի աշակերտների հետ՝ վեր հանելու աշակերտին հուզող ու մտահոգող հարցերը,
- պարզի աշակերտների նախասիրությունների շրջանակը,
- որոշակի իրավիճակային հարցերով ծանոթանա աշակերտների կարողություններին, հմտություններին, կամային հատկանիշներին:

Վերը թվարկվածների արդյունքում դասղեկը ճիշտ կկազմակերպի աշակերտների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների ուղղությունները՝ բարոյական, գեղագիտական, ռազմահայրենասիրա-կան, հոգևոր, իրավական, աշխատանքային, գիտաճանաչողական:

Յուրաքանչյուր շաբաթ հարկ է կազմակերպել դասղեկական ժամեր: Յուրաքանչյուր դասաժամի համար կազմել պլան՝ ընտրել զրույցի թեման, առանձնացնել նպատակը, աշակերտներին տալ համապատասխան հանձնարարություններ: Կարելի է նաև տվյալ թեմայով կազմակերպել խմբային աշխատանք՝ պատրաստելով պաստառ:

Դասղեկը իր աշխատանքային պլանում «Դասղեկական ժամերի» համար առանձնացնում է որոշակի թեմաներ, որոնք կարևոր են աշակերտի աշխարհայացքն ու աշխարհընկալումը ձևավորելու համար:

Քանի որ այս ուսումնական տարում իմ դասղեկական դասարանը փոխադրվեց 5-րդ դասարան, «Դասղեկական ժամերի» համար կընտրեմ հետևյալ թեմաները՝

- ✓ **Ոսկե կանոններ**
- ✓ **Դպրոցական կարգուկանուն**
- ✓ **Իմ իրավունքներն ու պարտականությունները**
- ✓ **Շնորհավոր տոնդ, Հայաստա՛ն**
- ✓ **Ինչպես լինել իսկական ընկեր**
- ✓ **Ինչպես լինել բարեկիրթ**
- ✓ **Ինչպես օգնել մարդկանց**
- ✓ **Իմ հայրենիքի գողտրիկ անկյունը /էքսկուրսիա պատմամշակութային վայրեր/**
- ✓ **Մեր քաջազուն նախնիները**
- ✓ **Ճանաչենք մեր նորօրյա հերոսներին**
- ✓ **Գիրքը իմ լավագույն ուղեկիցն է**
- ✓ **Պահպանի՛ր բնությունը:**

Դասարանի առանձնահատկություններից ելնելով՝ պետք է կազմել հոգեբանական թեստեր, նաև չանտեսել այնպիսի գործնական վարժությունները, որոնք կօգնեն կարգավորել աշակերտների միջանձնային հարաբերությունները, օրինակ՝ երբ դասարանում առաջացել են խմբավորումներ, կամ՝ աշակերտն ընդդեմ աշակերտի, կամ՝ խմբավորումն ընդդեմ աշակերտի:

Կիսվեմ իմ փորձով: Քանի որ ես դասղեկ լինելու փորձ չունեի, որոշեցի հանգամանալից պատրաստվել աշակերտներիս հետ հանդիպման առաջին օրվան:Որոշեցի մեր համատեղ աշխատանքների հենց առաջին օրը միասին սահմանենք որոշակի կարգուկանոն մեր դասարանի համար:Միասին պատրաստեցինք պաստառ, որի վերնագիրն էր՝ «Մեր դասարանի ոսկե կանոնները»: Ապա սկսեցինք

միասին սահմանել կանոնները:[4] Բոլորը ոգևորությամբ աշխատում էին: Այդ կանոններն են՝

- Միշտ ազնի՛վ եղեք
- Ուշադի՛ր լսեք
- Եղե՛ք հարգալից
- Հարգե՛ք միմյանց իրավունքները
- Կատարե՛ք ձեր պարտականությունները:

«Ոսկե կանոնների» հետ մեկտեղ պաստառին գրեցինք նաև «Կախարդական բառերը»՝ շնորհակալություն, խնդրում եմ, կարելի՞ է, ներեցեք: Պաստառը կախեցինք դասարանի պատից՝ տեսանելի տեղում: Քննարկեցինք նաև, որ միմյանց նկատմամբ պետք է լինենք հարգալից, պետք է օգտագործենք միայն բարի բառեր, քաջալերենք միմյանց, համագործակցենք, բոլորս պատասխանատու ենք միմյանց նկատմամբ:

Դասարանում ունեմ աշակերտ,որն ավելի ինքնուրույն է, քան մյուս աշակերտները, և նա փորձում է «իշխել» մյուսներին: Սկզբում ոչ ոք չէր բարձրաձայնում: Հանկարծ դասարանում տրամադրությունը փոխվում էր, իրար ականջի քչփչում էին: Հետո ես հասկացա, որ ինչ-որ բան այն չէ: Նրանք այնքան էմոցիոնալ են, ընդհանրապես չեն սիրում, երբ ես տխրում եմ կամ անհանգստանում, այդ իսկ պատճառով էլ ինձ ոչինչ չէին ասում: Որպեսզի կարողանամ լուծել առաջացած խնդիրը , որոշեցի հաջորդ օրը դասղեկական ժամին քննարկել այդ հարցը: Նախընտրեցի, որ իրենց հուզող հարցերը գրեն նախապես պատրաստված փոքրիկ թղթիկների վրա, որոնք լինելու էին անանուն և լցնեն տուփիկի մեջ: Դա կրելու էր շարունակական բնույթ: Հարցադրումն էր՝ «Ի՞նչն է ինձ տխրեցնում»: Տուփիկի անունը որոշեցինք դնել «Խորհրդավոր տուփիկ»: Երբ երեխաները

4.https://www.youtube.com/watch?v=m-jbMa4190Y

թերթիկները լցրին «Խորհրդավոր տուփիկի» մեջ, սկզբում լուռ կարդացի, այնուհետև առանց բարձրաձայնելու՝ ինչ է գրված, սկսեցի զրույց վարել աշակերտների հետ «Հարգի՛ր իմ իրավունքները» թեմայով: Ապա նրանց ուշադրությունը հրավիրեցի «Ոսկե կանոններին», տվեցի հետևյալ հարցերը՝

- ⇨ Ինչո՞ւ մենք որոշեցինք դասարանում սահմանել վարքագծի կանոններ:
- ⇨ Ինչպիսի՞ն կլինի իրավիճակը դասարանում, եթե բոլորս հետևենք մեր իսկ սահմանած կարգուկանոնին:
- ⇨ Ինչպիսի՞ն կլինի իրավիճակը դասարանում, եթե մենք չհետևենք կարգուկանոնին:

Յուրաքանչյուրը սկսեց մտածել իր դրսևորած վարքագծի շուրջ և անել անհրաժեշտ հետևություններ: Յուրաքանչյուրը հասկացավ, որ ինքը այս ընտանիքի անդամն է և իր անցանկալի վարքը բացասական է ազդում ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի վրա:

Հաջորդ դասղեկական ժամին որոշեցի հարցադրումը փոխել՝ «Ի՞նչն է ինձ ուրախացնում և ի՞նչն է ինձ տխրեցնում»: Նպատակս այն էր, որ երեխաները չսովորեն միայն բողոքել, այլև գիտակցեն՝ որքան ուրախ է անցնում մեր օրը միասին:

Կարևոր է նաև աշակերտի հետ վարել անհատական զրույց, հասկանալ նրա վերաբերմունքի պատճառը, չնսեմացնել նրան, չասել **« ամոթ քեզ»**,[5] այլ ընդամենը համբերատար զրուցել և բացատրել, որ իր վարքը մեզ տխրեցնում է կամ հարց տալ՝ «Պատկերացնո՞ւմ ես՝ ընկերդ քեզ հետ վարվի նույն կերպ, ի՞նչ կանես դու»: Այսպես «Խորհրդավոր տուփիկի» միջոցով աշակերտների հետ միասին կարողացանք բազում կոնֆլիկտային իրավիճակներին նպատակային լուծում գտնել, հարթվեցին դասարանում պատահած

5. https://www.youtube.com/watch?v=Q1TAD3WSSI8

անախորժությունները և ձևավորեց առողջ մթնոլորտ:

Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ նախատինքը կրթության ամենամեծ սխալն է: Այն երեխայի մեջ զարգացնում է անվստահություն սեփական անձի հանդեպ, իսկ անվստահությունը կաթվածահար է անում հոգին և թուլացնում է կամքը, խանգարում է ինքնուրույն որոշումներ կայացնել՝ դժվարությունները հաղթահարելու համար: Դրա փոխարեն կարելի անել նկատողություն՝ իմաստուն ձևով համադրելով բարությունն ու խստությունը:

Ըստ Կ.Դ.Ուշինսկու՝ երբեմն աշակերտի դրական հատկությունները անհրաժեշտ զարգացում չեն ստանում, իսկ բնավորության բացասական գծերը զարգանում և դրսևորվում են նրա վարքագծում: Դասղեկը սովորողների դրական կողմերը կարող է զարգացնել՝ կիրառելով անհատական մոտեցում, այն է՝ հետևելով թաքնված դրական գծերին և անհատական աշխատանք տանելով նրա հետ, այդ որակները ամրակայել և նրանց վարքագծում դրանք իշխող դարձնել:

Երբ աշակերտների հետ ձևավորվում են ընկերական հարաբերություններ, նրանք ակնկալում են, որ կարող են դիմել քեզ խնդրանքով, իսկ դու՝ չես մերժի: Օրինակ՝ այդ դասաժամին նստել այնտեղ, որտեղ ցանկանում է, կամ դասն անցկացնել այգում: Իհարկե, նրանց խնդրանքը դժվար է մերժել, բայց պետք է այնպես անել, որ նրանք չհատեն ուսուցիչ - սան սահմանը: Միշտ էլ լինում են դեպքեր, երբ մեկ-երկու աշակերտ փորձում են դուրս գալ վերահսկողությունից, սակայն ուսուցչի սաստող, բայց բարի հայացքը սթափեցնում է նրանց:[6]

Սովորողների դրական հատկությունների վրա հենվելը մեծ նշա-

6.https://www.edutopia.org/account/signup?grades

նակություն ունի: Նախ՝ սովորողների մոտ ծնվում է հավատ, որ իրենք կարող են վերացնել իրենց թերությունները և ուղղվել: Երկրորդ՝ դրական հատկանիշները գնահատվում են ըստ արժանվույն /օրինակ՝ մի դժվար իրավիճակ հաղթահարելու համար նվիրել կոնֆետ/, ուշադրությունը կենտրոնացնում են իրենց իսկ դրական հատկանիշների վրա և զարգացնում դրանք, որն էլ նպաստում է անցանկալի արարքների հաղթահարմանը և վերացմանը:

Հարկավոր է հաշվի առնել հետևյալը՝

- պետք է ձեռք բերել սովորողների վստահությունը
- պետք է ճիշտ պատկերացում կազմել սովորողների առանձնահատկությունների ու կարողությունների մասին
- պետք է աջակցել աշակերտին, նպաստել նոր, դրական հատկանիշների զարգացմանը՝ պահելով ուշադրության կենտրոնում:

Սակայն անհատական մոտեցման ժամանակ անհրաժեշտ է հարգանքին զուգակցել պահանջկոտությունը, բայց նաև չպետք է գերագնահատել կամ թերագնահատել սովորողների ուժերն ու կարողությունները:

Իմ փորձից: Իմ դասղեկական դասարանում ես դասավանդում եմ «Մայրենի» առարկան: Երբ աշակերտներիցս մեկը բացակայում է՝ վատառողջ լինելու պատճառով, նրան հնարավորություն եմ տալիս հեռավար հետևել իմ դասին՝ թեմաներից հետ չընկնելու նպատակով /եթե առողջական վիճակը թույլ է տալիս/: Նրանք նաև պարտավորվում են կատարել տնային հանձնարարությունները: Սակայն աշակերտներիցս մեկը, երբ հիվանդության պատճառով հաճախ բացակայում էր, տնային հանձնարարությունները չէր կատարում, արդյունքում ունենում էր ահռելի բացթողումներ և դժվարությամբ էր ընդգրկվում դասապրոցեսի մեջ: Ես որոշեցի համագործակցել ծնողի հետ՝ պահանջելով, որ երեխան

բացակայության ընթացքում կատարի օրվա հանձնարարությունները: Համագործակցությունը ստացվեց:

Տնային աշխատանք հանձնարարելիս նշում եմ առաջադրանքի կատարման նվազագույն և առավելագույն քանակը՝ երեխաների կարողունակություններից ելնելով:Որոշ աշակերտներ տնային հանձնարարությունները կատարում էին նվազագույն չափով,մի մասն էլ՝ առավելագույն: Դե, իհարկե, խրախուսում և գովաբանում էի նրանց աշխատասիրությունը՝ չնսեմացնելով մյուսներին՝ նպա-տակ ունենալով ապահովել առողջ մրցակցություն: Որոշ ժամանակ անց մյուսներն էլ հետևեցին ընկերների օրինակին:

Ուրեմն՝ ուսուցիչ - դասղեկի գերագույն նպատակը պետք է լինի աշակերտի մոտիվացիան: Իր սպասելիքներն արդարացնելու համար՝ ուսուցիչը աշակերտին հստակ պետք է ներկայացնի, թե ինչ է ակնկալում աշակերտից, իսկ սպասելիքները պետք է լինեն իրատեսական՝ յուրաքանչյուր սովորողի կարիքներին համապատասխան:

Գուխ 3. Դասղեկի համագործակցությունը ծնողի հետ

Որպես կանոն բոլոր ուսումնական հաստատություններում ժամանակ առ ժամանակ /օրինակ՝ ամիսը մեկ անգամ/ հրավիրվում են ծնողական ժողովներ, որտեղ քննարկվում են աշակերտների վարքին, առաջադիմությանը վերաբերող և այլ բազմաբնույթ հարցեր: Մինչ ծնողական ժողով հրավիրելը, պետք է ծնողների հետ համաձայնեցնել օրը, ժամը, քանի որ ծնողների մեծ մասը աշխատում է: Որոշվում է ծնողական ժողովի օրակարգը, առանձնացվում են ամենակարևոր հարցերը / օրինակ՝ ծնողական խորհրդի կազմը ևն/ : Շատ կարևոր է ծնողական ժողովը սկսել բարձր տրամադրությամբ և ժպիտով: Նախ և առաջ հարկավոր է խոսել դրական հարցերի շուրջ՝ ապահովելով անմիջական մթնոլորտ: Պետք չէ առանձին աշակերտների խնդիրները դարձնել ընդհանուր քննարկման թեմա, այլ

յուրաքանչյուր ծնողի հետ քննարկել առանձին: Ծնողի մոտ աշակերտի վարքի բացասական կողմը ներկայացնելիս պետք է լինել նրբանկատ, այնպես անել, որ ծնողը ժողովից հետո լավ տրամադրությամբ հեռանա, այլապես նա կխուսափի հաջորդ ժողովին մասնակցելուց /կարելի է կիրառել նաև «Սենդվիչի մեթոդը»/:

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտը ցուցաբերում է ավելի լավ արդյունքներ, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները, նրա վարքը դառնում է դրական, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լայն հնարավորություններ ու պայմաններ է ունենում: Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները չեն համագործակցում ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, նրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է: Աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն ներգրավված են դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուս երեխաների համեմատությամբ: Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ:

Իմ փորձից: Իմ դասղեկական դասարանի հետ աշխատելիս ծնողների հետ համագործակցությունը տվեց իր դրական արդյունքները: Գրեթե ամեն օր ես ծնողներին փոխանցում էի երեխաների վարքի և առաջադիմության հետ կապված տվյալներ, քանի որ համագործակցում էի նաև դասավանդող ուսուցիչների հետ: Սկզբում ծնողներն այնքան էլ չէին ընդունում աշակերտների ուսումնառության հետ կապված իմ առաջարկությունները, պահանջները կամ դիտողությունները:Սակայն կիսամյակի ընթացքում աշակերտներս գրանցեցին բարձր առաջադիմություն:

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ոչ միայն ուսման արդյունքների բարելավման գործում, այլև հենց ծնողների համար, քանի որ ծնողը սկսում է ապրումակցել երեխայի հույզերին,այն է՝

ավելի լավ է հասկանում նրան,ավելի շատ է ուշադրություն դարձնում, ավելի հոգատար է երեխայի նկատմամբ, խիստ չէ և քաջալերում է նույնիսկ ամենափոքր ձեռքբերումները, հաճույքով է զբաղվում երեխայի կրթությամբ ու դասատիարակությամբ, դրական հարաբերություններ է ստեղծում երեխայի ուսուցիչների հետ, որի հետևանքով ճիշտ ժամանակին կարողանում է լուծել երեխայի ուսումնառության ընթացքում ծագած խնդիրներն ու դժվարությունները, իսկ ուսուցիչն ավելի հեշտ է կարողանում հաղորդակից դառնալ աշակերտի կարիքներին:

Վրաստանում 2012 թվականին Տարրական կրթության նախագծի /G – PriEd/ կողմից միջազգային և տեղական փորձագետների մասնակցությամբ անցկացվեց հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել կրթական գործընթացում ծնողների ներգրավվածությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ծնողների ներգրավվածությունը դպրոցների գտնվելու վայրի հետ

կապված տարբեր դժվարություններ է առաջացնում: Վրաստանի Կրթության և գիտության նախարարությունը մշակեց վրաց իրականությանը հարմարեցված մոդել, որը նախատեսում էր համապատասխան նյութերի ինտեգրում տնօրենների, ուսուցիչների և ծնողների համար, որոնք կօգնեն ծնողներին և նրանց երեխաներին ավելի լավ ճանաչել միմյանց, ինչի արդյունքում կձևավորվեն բարիդրացիական հարաբերություններ, կօգնեն միմյանց սոցիալական փորձի և գիտելիքի ձեռքբերման հարցում:[7]

Նման փորձ կիրառվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի կենտրոնական դպրոցում և տալիս է դրական արդյունք /ստեղծվել է դպրոցական կայք – էջ, էլեկտրոնային հասցեների միջոցով տեղեկատվությունը շատ արագ և օբյեկտիվորեն փոխանցվում է ծնողներին, յուրաքանչյուր ուսուցիչ յուրաքանչյուր երեխայի համար լրացնում է «Առաջադիմության բնութագիր», որը գրավոր ձևով ուղարկվում է ծնողին, տնօրենությունը կազմակերպում է ժողովներ, հանդիպումներ ծնողական համայնքի հետ, ծնողին տրանադրվում է հետադարձ կապ, ուսուցիչները ծնողների հետ կազմակերպում են անհատական հանդիպումներ յուրաքանչյուր երեխայի վարքն ու առաջադիմությունը քննարկելու համար/ :[8]

7. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

8. https://www.youtube.com/watch?v=BTFASExvkAQ

Եզրակացություն

Ժամանակակից հասարակության մեջ կրթությունը ուրույն տեղ է զբաղեցնում: Չնայած ժամանակակից մարդը ճկուն է, շրջահայաց, բայց 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելու համար կրթվելը կարևոր ու անհրաժեշտ է: Ուստի ուսուցիչը կանգնած է լրջագույն մարտահրավերների առջև, քանի որ ժամանակակից աշխարհի մտածելակերպն ու պահանջները ստիպում են վերանայել ուսումնառության ընթացքում գործածվող մեթոդները, հնարները, աշխատելաոճը, գիտելիքները, այլապես ձախողումն անխուսափելի կլինի: Ուսուցչի խնդիրն է ապահովել կրթության այնպիսի մակարդակ, որպեսզի երիտասարդ սերունդը պատրաստ լինի ինքնուրույն կյանքի, ինքնուրույն որոշումներ կայացնելու և ինքնահաստատվելու: Իսկ դասղեկի պատասխանատվությունն այսօր բազմապատկվելէ:

Դասարանի ղեկավարումը հսկայական պատասխանատվություն է և պահանջում է նվիրված ու քրտնաջան աշխատանք: Այդ իսկ պատճառով դասղեկներին անհրաժեշտ է մենթորական և մեթոդական աջակցություն, կրթական խորացված դասընթացներ, վերապատրաստումների հասանելիություն, ինչպես նաև պատկան մարմինների կողմից լուրջ աջակցություն, բայց մեծ մասամբ այդ ծանր բեռը մնում է ուսուցչի ուսերին իր միջոցների հաշվին:Ոչ բոլոր ուսուցիչներն են պատրաստ իրենց ուսերին վերցնել հավելյալ բեռ ու պարտականություններ՝ դասարանի ղեկավարման տեսքով:

2020 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ռուսաստանի Դաշնության 84 վարչական շրջաններում Կրթական ռեսուրսների ազգային հիմնադրամի փորձագետները հարցում են անցկացրել: Հարցմանը մասնակցել է մոտ 2500 ուսուցիչ : Ուսուցիչների 8%-ը, որոնք արդեն դասղեկ են, համաձայնել են մասնակցել դասղեկների վերապատրաստման դասընթացին միայն շատ համոզելուց հետո, 14%-ը նշել է, որ իրենց ստիպել է տնօրենությունը, ուսուցիչների 6-%-ից ավելին ոչ մի դեպքում չի ցանկանում դասղեկ լինել: Այդ իսկ պատճառով երկրում դասղեկական աշխատանքների լրացուցիչ վճար

է մտցվել, ստեղծվել են մենթորական և մեթոդական աջակցության ինստիտուտներ, կրթական խորացված դասընթացների հասանելիություն:[9]

Այսպիսով,անհրաժեշտ է մշտադիտարկումների միջոցով բացահայտել դասղեկական աշխատանքների կազմակերպման ընթացքում առաջացած խնդիրները կրթական խորացված դասընթացների, վարպետության դասերի, անվճար վերապատրաստման դասընթացների, սեմինարների կազմակերպման ինչպես նաև համապատասխան մեթոդական ձեռնարկների առցանց հասանելիություն հայերեն տարբերակով:

9. “Учительская газета” №49 от 8 декабря

Օգտագործված գրականության ցանկ

1. Статья “Роль классного руководителя в современной школе”, 17.08.2018

2. «ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն՝ ՊՈԱԿ» օրինակելի կանոնադրություն, կետ 76

3. Սուխոմլինսկի Վ. Ա., Հարյուր խորհուրդ ուսուցչին, 2-րդ մաս, Երևան, 1981թ., 174 էջ

4. https://www.youtube.com/watch?v=m-jbMa4190Y

5. https://www.youtube.com/watch?v=Q1TAD3WSSI8

6.https://www.edutopia.org/account/signup?grades

7. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

8. https://www.youtube.com/watch?v=BTFASExvkAQ

9. “Учительская газета” №49 от 8 декабря